քին չենթարկվենք, վաղը դրա համար ավելի թանկ կվճարենք, որ Ղարաբաղն ամենևին էլ հաղթող կողմ չէ, որ նա ընդամենը հաղթել է ճակատամարտում, որ իբրև օրենք ճակատամարտում տարած հաղթանակին անպայման հետևում է պարտությունը, որ Ղարաբաղն այսօր հակառակորդից ուժեղ է, բայց վաղը հակառակորդն ավելի ուժեղ կլինի և կհաղթի, ուստի, քանի ուշ չէ, քանի դեռ ուժեղ կողմը մենք ենք, պարտված ճանաչենք մեզ, մեզ համար շահեկանն այս է...:

Անընմբռնելի տրամաբանություն, որ հիշեցնում է հայտնի անեկդոտը. հոգեբուժարանից հիվանդը փախչում է, բարձրանում ծառը: Բժիշկները ոչ մի կերպ չեն կարողանում համոզել, որ նա իջնի, վերադառնա հիվանդանոց: Բժիշկներին օգնում է մեկ այլ հիվանդ, որ գալիս-կանգնում է ծառի տակ և ներքևից վերև ասում իր բախտակցին. «Լսիր, իջիր ծառից, թե չէ գլխիդ կթքեմ»: Ծառի վրայինը, սպառնալիքը լսելուն պես, արագ-արագ իջնում է ցած:

Ահա այսպիսի տրամաբանությամբ է մեր նախագահը իր մամլո-հարցազրույցում և դրան հետևած հոդվածում մեզ համոզում «ծառից իջնել»:

Նա մեզ ասում է՝ ինչ որ մերժում ենք այսօր, վաղը խնդրելու ենք, բայց հետո չենք ստանա: Ի՞նչ ենք մերժում. հրաժարվել արյամբ ձեռք բերածից: Այո՛, դրանից եթե այսօր հրաժարվենք, վաղը, իրոք, եթե խնդրենք՝ ետ չենք ստանա: Ետ տալու փոխարեն կծիծաղեն մեզ վրա: Քանզի վարված կլինենք հիշածս անեկդոտի հերոսների տրամաբանությամբ:

Նախագահի հիշողությունը նույնպես տարօրինակ է, որքան տրամաբանությունը: Նա ասում է. «Մենք մեկ անգամ արդեն Ստամբուլը արյան ծով դարձնելով՝ կորցրինք Արևմտահայաստանի կեսը»: Ե՞րբ: Ինչպե՞ս: Թուրքի ստրուկ հայերս ինչպե՞ս, ինչու՞ արյան ծով դարձրինք Ստամբուլը, ուր քիչ չէր նաև հայ բնակչությունը: Ջազդախոսությու՞ն չէ այս սեփական ժողովրդի հասցեին:

Նախագահը շարունակում է զարմացնել մեզ:

Նա ասում է՝ Ղարաբաղի հակառակորդը Ադրբեջանը չէ, այլ «Համաշխարհային հանրությունը», որին մենք, իբր թե, ձեռնոց ենք նետել, որը մեզ, իբր թե չի ների: Ո՞րն է այդ ձեռնոցը: Ղարաբաղցիների՝ իրենց բնօրրանում ազատ ապրելու ձգտումն ու դրան հասնե՞լը: Ինչու՞: Իբրև թե դրանով Ղարաբաղն սպառնում է տարածաշրջանային համագործակցությանն ու անվտանգությանը (նույնիսկ անվտանգությանը), ինչպես նաև Արևմուտքի նավթային շահերին: Ահա թե ինչ պետք է հասկանալ «Համաշխարհային հանրություն» ասելով: «Ինքնախաբեությամբ չզբաղվենք և զուր պատրանքներ չփայփայենք,- հորդորում է մեզ մեր նախագահը,- Ղարաբաղի անկախության հարցում մենք դաշնակիցներ չունենք»: Ողջ աշխարհը մեր դեմ է,- ասում է նա: Ողջ աշխարհ ասածը նավթային շահեր հետապնդող Արևմուտքն է, ավելի ստույգ՝ նավթային շահեր հետապնդող արևմտյան հոմակը: Եվ ինչու՞ միայն արևմտյան: «Մեր միակ դաշնակիցը,- շարունակում է նախագահը, արկածախնդրության մերժումն է»: Այնպես որ, ճարուճամփա չունենք, ազգովի ֆիդայի էլ դառնանք՝ փրկություն չունենք: Եվ ո՞վ է ասողը՝ նա, ով երեկ Թատերական հրապարակում բռունցք էր ճոճում՝ «Պայքա՜ր... պայքա՜ր մինչև վերջ» պոռալով, նա, ում վարչախումբը իշխանության եկավ արկածախնդրությամբ ու խաբեությամբ, Ղարաբաղի ազատագրության համար ոտքի ելած համաժողովրդական շարժումը նենգափոխելով, գրգռիչ սադրանքներով ժողովրդին մղելով համընդհանուր անժամկետ գործադուլների, սադրիչ գործադուլներ կազմակերպելով օդանավակայանում, օրերով խափանելով նրա աշխատանքը, արյունալի խժդժություններ կայարանում, զանգվածային թունավորումներ՝ արտադրական ձեռնարկություններում: Իշխանության հասնելուն պես՝ կողոպուտ ժողովրդական ունեցվածքի, համատարած թշվառություն, արտագաղթ, մուրացկանություն, աշխատանքը կորցրած, բացարձակ լքված ժողովուրդ՝ մխրճված հուսահատության մեջ... Իսկ իշխանությունների արկածախնդրությունը նոր թափ ու ձևեր է ստանում. խորհրդարանական ու նախագահական արկածախնդրալի ընտրություններ, խայտառակություն աշխարհով մեկ: Տանկերի դուրս բերում սեփական ժողովրդի դեմ: Տասնյակ անմեղ մարդկանց ձերբակալություններ, դարաբաղյան ազատամարտիկների ստվար մի խումբ բանտախցերում փակել, իբրև թե փորձել են պետական հեղաշրջում կատարել: Դատարանում մեղադրանքները հերքվեցին... Բայց միևնույն է, նրանք վտանգ են ներկայացնում իշխանությունների համար և մնում են բանտախցում: Արկածախնդրություն, այն էլ ինչպիսի՞: «Արդարամիտ», «արդարադատ» Արևմուտքը, կամ այսպես կոչված «Համաշխարհային հանրությունը» այս չգիտի՞: Գիտի, մեզանից էլ լավ: Եվ գուցե հենց այդ էլ օղակ է դարձրել, գցել մեր նախագահի վիզը և քաշում է, ստիպում նրան մնալ նախագահական աթոռին գամված և ծառայել իրեն: Եվ նախագահը, ճարն ինչ, ծառայում է, ջանքեր գործադրում ժողովրդին իր ետևից տանելու, կամ գոնե պատրանք ստեղծելու, թե տանում է: Նրա վզի օղակն օր-օրի սեղմվում է: «Համաշխարհային հանրությունը», շնագայլերի այդ հոմակը, որ ոսկոր է գտել հանձին Բաքվի նավթի, շտապեցնում է մեր նախագահին: Նա էլ նեղում է իր ժողովրդին՝ «շտապիր, համաձայնիր», թե չէ «Համաշխարհային հանրությունը» քեզ կջնջի աշխարհի երեսից:

Գիշատիչների այդ հոմակին աշխարհի ոչ մի ժողովուրդ չի լիազորել հանդես գալ իր անունից: Նա բոլորովին էլ համաշխարհային հանրություն չի ներկայացնում: Նա հրեշ է, բայց չի ուզում հրեշ երևալ: Համաշխարհային հանրային կարծիքից նա շան նման վախենում է: Այլապես ԱՄՆ-ի կոնգրեսը, վերստին քվեարկելով, չէր վերահաստատի Ադրբեջանին ամերիկյան օգնություն տրամադրելու արգելքը, պատճառել բերելով, որ նա՝ Ադրբեջանը, շարունակում է Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումը: «Համաշխարհային հանրություն» կոչվածը, կամա թե ակամա, հաշվի է նստում համաշխարհային հասարակական կարծիքի հետ: Հանուն իր նավթային շահերի նա չի հանդգնի Հայաստանն ու Արցախը խեղդել արյան մեջ: Բաքվի նավթին հասնելու շատ ճանապարհներ կան իր առջև: Չլինեն էլ, կստեղծի: Եվ կընտրի իր համար ամենաշահեկանը: Թեև մեր նախագահին շարունակում է պատանդ պահել, բաց չի թողնում նրա օձիքը և փորձում է նրան ու նրա վարչախմբին մղել իրենց վերջին .արկածախնդրության ստորագրություն դնել մի ակտի տակ, որով Արցախը արյամբ ձեռք բերած իր հաղթանակը ճանաչի իբրև պարտություն և կամովին ետ ընդունի նետած շղթաները: Նրանց հույսն այն է, որ թշվառության հասած, դրսերի փշրանքներով գոյություն քարշ տվող ժողովուրդը, ժողովուրդ էլ չէ իր բուն իմաստով, այլ սովի մատնված ցաքուցրիվ բազմություն որովայնի գերի, նա կսոսկա, եթե դրսից եկող ողորմությունը դադարի. հենց միայն դրանով նրան վախեցնելը բավական է, որ ճորտանա քեզ: Նա այլևս ի վիճակի չէ, ուժ չի գտնելու իր մեջ համախմբվելու, բարձրացնելու գլուխը, ոտքի կանգնելու, ընդդիմանալու...

Նրանք չեն կարծում, թե հնարավոր է, որ Սարդարապատը կրկնվի:

Քարինտակի Արծվիկի կարծիքը հարցնող չկա:

Գարուն. փետրվար 1998



## ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
# ՀԱՐԱՏԵՎՈՂ ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Զվարթնոցն իր կառուցման օրվանից արժանացել է փառքի ու գովեստների: Միջնադարի մեր բոլոր անվանի պատմիչները թողել են հիացական արտահայտություններ՝ ուղղված տաճարի վեհությանը:

Կառուցվելով 642-652 թթ. ընթացքում՝ Զվարթնոցը կանգուն գոյատևել է մինչև տասներորդ դարի 70-ական թվականները՝ շուրջ 300-330 տարի:

641 թ. Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունու առաջարկով Տայքի Մամիկոնյանների հոգևոր թեմի եպիսկոպոս Ներսեսին օծում են Հայոց կաթողիկոս՝ Ներսես Գ: Արաբների հարձակումներով սանձազերծված կոտորածների զոհերին հուղարկավորելով, տարբեր վայրերում նրանց հիշատակին նվիրված կոթողներ կանգնեցնելուց հետո, Ներսես կաթողիկոսը ձեռնարկում և կառուցում է Գրիգոր Լուսավորչի անվամբ Զվարթնոց տաճարը այնտեղ, ուր քրիստոնեությունը հայերի կողմից հռչակվեց պետական կրոն՝ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի մասնակցությամբ:

Մինչ Զվարթնոցը, նաև նրանից հետո, աշխարհում կային մեծանշանակ շատ շինություններ, սակայն Զվարթնոցը, թե՛ իր տեսակի մեջ և թե՛ որպես ճարտարապետական արվեստի ստեղծագործություն, եզակի էր. այն իր ժամանակի մեծագործություններից էր: Թորոս Թորամանյանը Զվարթնոցը նույնքան էլ եզակի է համարում որպես կառուցողական արվեստի արտակարգ նմուշ՝ «անհավատալի կերպով հանդուգն վստահությամբ կառուցված»: Ավերակը պեղելիս որոշ աննախադեպ տարրեր հայտնաբերելով՝ Թորամանյանը գրում է. «...որոնց մեկն ալ կարծես, ի միջի այլոց, մեզ հրավիրել է 14 դար հետո ժամանակի մեծ վարպետի հանճարին առաջ հարգանքով ու ակնածանքով խոնարհիլ», իսկ կառուցողին բնութագրում է «տարողությանց նրբին հաշիվների մասին իր ունեցած կատարյալ հմտության վրա վստահ»:

Ուրեմն, ավելի քան տարօրինակ է, որ մեր դարի մի շարք անվանի հետազոտողների գործերում Զվարթնոցի կառուցվածքային կողմի մասին հանդիպում ենք սոսկ բացասական որակումների, որոնք, սակայն, ավելի շուտ արդյունք են անբարյացակամ վերաբերմունքի, քան որոշակի փաստերի: Ավելին, ոմանք էլ արհեստականորեն ստեղծված այդ կարծիքն օգտագործում են՝ հետամնջտելով այլ նպատակներ:

Վրաց նոր տպագրության ստեղծողներից Վրաստանի ԳԱ ակադեմիկոս Ե. Ս. Թաղայշվիլին, 1902 և 1907 թթ. կազմակերպած հնագիտական երկու արշավախմբերի գործունեության արդյունքներում, որ հրատարակել է «Материалы по археологии Кавказа» XII պրակում, Բանակ տաճարին նվիրված «Բանա» գլխում գրում է. «Ներսեսի տաճարները և դրանց նմաններն անսովոր գեղեցիկ ու նրբագեղ էին, բայց ոչ հաստատուն», «Վաղարշապատի տաճարը նույնպես կարճ ժամանակ դիմա-



Զվարթնոց, ընդհանուր տեսքը
*(վերակազմությունը Թ. Թորամանյանի)*



© National Library of Armenia

ցավ, հաստատ հայտնի է, որ այն X դարի վերջում արդեն փլված էր... Գագիկի տաճարը՝ կառուցված Ներսեսի տաճարի օրինակով, ամբողջությամբ վերցված շատ քիչ տարբերվեց նրանից»: Այնուհետև Թաղայշվիլին ավելացնում է. «Տաo-ում և ընդհանրապես Ճորոխի ավազանում դառը փորձով համոզվեցին, որ Ներսեսի տաճարի մույթերի նմանակները չեն դիմանում թաղերի ու գմբեթի ծանրությանը: Այդ արդեն քաջ հայտնի էր X դարում, երբ կառուցում էին Բանայի տաճարը (888-923), և հրաժարվեցին հնուց ընդհանուր գծերով տիրապետող դարձած հատակագծային ձևերից, փոփոխեցին մույթերի սիստեմը... Ահա թե ինչու չի կարելի Բանայի հատակագծում չտեսնել Ներսեսի Վաղարշապատի տաճարի հատակագծի հետագա զարգացումը»:

Գրեթե նույն միտքն է արտահայտում վրաց ակադեմիկոս Շ. Ամիրանաշվիլին. «Բանան կոնստրուկտիվ առումով ուներ շատ կարևոր կատարելագործումներ՝ լավ պահպանված էր մինչև 100 տարի առաջ և քանդվել է թշնամական ձեռքով, մինչդեռ Վրաստանի ու Հայաստանի նույնատիպ կառույցները՝ Իշխան, Զվարթնոց, Գագիկ թագավորի տաճարը, փլվել են կառուցումից շատ չանցած: Այս շենքում վերացվել են կոնստրուկցիաների բոլոր թույլ տարրերը, որոնք առկա էին Իշխանում և Զվարթնոցում: Բանայի ճարտարապետը կատարելագործել և կերտել է շրջագծի մեջ առնված առավել ամուր քառախորան՝ զանգվածեղ սյուների փոխարեն, որոնց անմիջականորեն հարում էին խորանները, գմբեթատակ քառակուսու անկյունում նա ստեղծեց հենարան եռաստիճան ավանդատներով՝ հընթացս ներսում երկարացնելով քառախորանի թևերը»:

Ակադեմիկոս Գ. Չուբինաշվիլին և ակադեմիկոս Ն. Սևերովը շատ էլ չեն հեռանում նախորդներից: Նրանք գրում են. «Քանի որ Բանայի կաթողիկեն կոնստրուկտիվ տեսակետից երևան է բերում զգալի փոփոխություններ, որոնք ապահովել են նրա թաղերի գոյատևումը ընդհուպ մինչև XIX դարը, մինչ Իշխանն ու Զվարթնոցը հազիվ դիմացել են 200 տարի, ապա հետևում է, որ այն պետք է համարել վերջինն այդ շարքում և նրա կառուցումը տանել VII դարի կեսերը»:

Ակադեմիկոս Վ. Բերիձեն ավելի հակիրճ է. «Մյուս օրինակների (Իշխան, Զվարթնոց, Գագկաշեն) ոչ երկարակյաց լինելը բացատրվում է, ըստ երևույթին, հիմնական կոնստրուկցիաների չափազանց բարդությամբ», «Բանա տաճարը կանգուն գոյատևել է մինչև XIX դարը համեմատաբար լավ վիճակում, ի տարբերություն նույնատիպ մյուս բոլոր կառույցների, ինչը, անկասկած, բացատրվում է նրա կոնստրուկցիաների որակով»:

Պրոֆեսոր Պ. Զաքարայան գրում է. «Գմբեթատակ մույթեր կային նաև Իշխանում ու Զվարթնոցում, բայց ճարտարապետները հաշվի չեն առել երկրորդ աստիճանի ծանրությունը, և դրանք բավական շուտ քանդվեցին, իսկ Բանան կանգուն էր հարյուրամյակներ, մինչև XIX դարի կեսերը»:

Մոսկվացի գիտնական Ա. Կուզնեցովը փորձում է հարցը քննարկել առավել գիտականորեն. «Զվարթնոցի ճարտարապետի ստեղծագործական մտահղացումը չի համապատասխանել դարաշրջանի տեխնիկական գիտելիքների մակարդակին: Զվարթնոցի և Բանայի տաճարների ճարտարապետներին չի հաջողվել ստեղծել կենդանի կապ ներքին խաչագմբեթարդ տարածության ու արտաքին ռոտոնդաձևի միջև: Դժվարությունը, որ առկա է մի այլ, ավելի ճշմարտացի և մեծ հուշարձանին արժանի վերակազմության նախագծի ստեղծման համար, պայմանավորված է Զվարթնոցի կոնստրուկտիվ անտրամաբանական հատակագծով...»:

Հայ հետազոտողներից տվյալ հարցի շուրջ Կ. Հովհաննիսյանը գրում է. «Գագիկի տաճարին վիճակված չէր երկար ժամանակ կանգուն գոյատևել, ինչպես և այդ տիպի մյուս եկեղեցիներին: Դրա համար պատճառ է ծառայել համարձակ մտահղացումը, սակայն իր հիմքում շինության կոնստրուկցիայի խոցելի լինելը»:

ՀՀ ԳԱԱ ակադեմկոս Վ. Հարությունյանը ևս բազմիցս անդրադարձել է հիշյալ թեմային: 1969 թ. հրատարակած «Էջմիածնի ճարտարապետական հուշարձանները» ուղեցույցի 28-րդ էջում կարդում ենք. «Զվարթնոցի կյանքը տևական չի եղել, արդեն X դարում այն ավերակ էր: Այդ հանգամանքը բացատրվում է որոշ կոնստրուկտիվ թերություններով, որ բխում է այդ տիպի տաճարների (Իշխանի ու Բանայի եկեղեցիները Տայքում, Գագիկի եկեղեցին Անիում, Լեկիթի տաճարը Ադրբեջանում) հորինվածքային լուծումից»:

1978 թ. հրատակարած «Էջմիածին» եռալեզու ուղեցույցի երեք էջերում (17, 32, 46) կարդում ենք վերոբերյալ հատվածը նույնությամբ: Նույնը՝ «Զվարթնոց» ուղեցույցի 4-րդ էջում:

«Նախնեաց ոտնահետքերով» բրոշյուրի (1995 թ.) «Հայկական Պոմպեում» խորագրի տակ, 20-րդ էջում կարդում ենք. «Ավերակում ուշադրությունս գրավեցին տաճարի ներսում հավելված մույթերի մնացորդները: Դրանց մասին հիշատակություն կա կառուցումն ավարտելուց 3 տարի անց արված արձանագրությունում, երբ նկատելի են դարձել վթարային ճեղքերը: Ուրեմն Զվարթնոցն ու Գագկաշենը կոնստրուկտիվ առումով անթերի չեն եղել: Դա էլ պատճառ էր դարձել երկուսի կործանմանը»:

Այսպես, հիմնվելով Ե. Թաղայշվիլու և մյուսների բառիս բուն իմաստով հորինած անճիշտ, եթե չասենք՝ կեղծ տվյալների վրա, մեր ժողովրդի ամենանշանավոր հուշարձանի մասին թյուր տեսություններ են մոգոնում և անընդհատ կրկնում, որ գալիք բոլոր սերունդներն իմանան, թե տեսեք՝ «Ունեին մի ուլ, այն էլ ականջը խուլ»:

Վերոհիշյալ բոլոր գիտնականների գրավոր հիշատակությունները զուրկ են հավաստիությունից: Նրանք Բանակ տաճարը համարում են վրաց արվեստի ստեղծագործություն, կառուցված X դարում Ադրներսեի օրոք (888-923 թթ..), Կվիրիկե (Կյուրիկե) Բանելու ձեռքով, որը և դարձել է այդ տաճարի եպիսկոպոսը: Հետագայում ապացուցվում է, որ տաճարը կառուցվել է ոչ թե X դարում, այլ VII դարում (Գ. Չուբինաշվիլի, Տ. Մարության), ապա մեծապես քանդված շինությունը վերականգնվում է Ադրներսեի օրոք Կվիրիկեի ձեռքով: Վրաց գիտնական Ե. Թաղայշվիլին բառացիորեն գրում է. «Եթե Բանան կառուցվել է VII դարում, ապա այն պետք է համարել հայկական հուշարձան, կառուցված Ներսեսի կողմից, այդ ժամանակ մեկ ուրիշն ի վիճակի չէր այդպիսին կառուցել, ես այն համարում եմ X դարում կառուցված վրացական հուշարձան»: Մեզանում Ստ. Մնացականյանը կիսում է Ե. Թաղայշվիլու այս կարծիքը:

Եվ ահա, վրաց որոշ գիտնականներ, իրենցը համարելով Բանակ տաճարը (ի հակակշիռ այդ տիպի հայկական հուշարձանների, այդ թվում և Զվարթնոցի), նրան վերագրում են մեծամեծ առավելություններ. տեսեք, թե ինչպես նա կանգուն գոյատևել է մինչև XIX դարի կեսերը, մինչդեռ Զվարթնոցը և մյուսները կարճ կյանք են ունեցել, կործանվել են: Ինչ վերաբերում է Ա. Կուզնեցովի դրույթներին, պետք է նկատել, որ նրա եզրակացություններն ավելի քան տեսական են և գրեթե չեն հիմնվում Զվարթնոցի ավերակի իրական տվյալների վրա:

Անշուշտ, որոշ աշխատություններում փորձ է արվում վերականգնել ճշմարտությունը, բայց առ այսօր հին վարկածները մնացել են տիրապետող. օտարի ջրաղացին էլ ջուր են լցնում հայ հետազոտողները, փոխանակ ձեռքի տակ ունեցած աշխատանքային հնարավորություններով պարզելու իսկությունը: Եվ վերջապես, եթե պարոն Վ. Հարությունյանը համոզված է, թե Զվարթնոցը կործանվել է կառուցողների սխալների հետևանքով, ապա ի՞նչ տրամաբանությամբ է գովեստներ շռայլում նույն կառույցի ու կառուցողների հասցեին. «Որպես բարձրարվեստ ճարտարապետական կոթող Զվարթնոցն ավերակ վիճակում էլ չի դադարում հմայել, պատկառանք ներշնչելով այն հանճարեղ կառուցողների հիշատակի նկատմամբ, որոնք ավելի քան 1320 տարի առաջ կանգնեցրին այս հոյակապ տաճարը, որպես դարաշրջանի հայ ճարտարապետական արվեստի նշանակալից նվաճումների փայլուն վկայական»: Չէ՞ որ ճարտարապետական երկը բարձրարժեք է լոկ այն ժամանակ, երբ բոլոր առումներով է կատարյալ. քանի՞ գրոշ արժե գեղեցկագույն կոթողը, որ կառուցվել է կարճ ժամանակում կործանվելու համար:

Ցավն այն է, որ մեր հուշարձանների հետազոտությամբ զբաղվում են գերազանցապես արվեստագետ պատմաբաններ, որոնք, խորագիտակ չլինելով շինությունների հիմնական հարցերում, հանգում են ինտուիտիվ եզրակացությունների: Կոնկրետ հաշվարկներ կատարող հնձեները, չնչին բացառությամբ, հեռու են մնում նման «գլխացավանքից»: Մինչդեռ սիրողական մոտեցումը անթույլատրելի, վնասակար լինելուց բացի, փաստորեն ծաղր է անցյալի մեծագործ վարպետների հասցեին: Գրում են, թե զվարթնոցատիպ բոլոր հուշարձանները կործանվել են. հարցնող լինի, իսկ ո՞ր տիպի հուշարձանները չեն կործանվել: Այդպիսիք չկան: Նրանք էլ, որ կանգուն են, վերականգնված են կամ նորոգված. ավանհռիփսիմեատիպ 23 տաճարներից կանգուն են միայն մի քանիսը, այն էլ վերանորոգումների շնորհիվ:

Զվարթնոցը կանգուն էր ավելի քան 300 տարի: Կործանվելուց հետո չի վերականգնվել: Բանակը սկզբնապես կանգուն գոյատևել է 200 տարուց պակաս, առաջին մեծ կործանումից հետո վերականգնվելով 888 թվականին, մեծ ձևափոխություններ է կրել մոտավորապես 1600 թ.: Նրա որոշ մասեր՝ բոլորակ սրահի արտաքին պատն ու թաղը, կործանվել են երկու անգամ, խորանների թաղերն ու գմբեթը՝ առնվազն երկու անգամ և այլն: Բանակի գոյատևումը մինչև XIX դարի կեսերը պետք է հասկանալ հարաբերականորեն՝ ամեն մի վնասվելուց հետո, ժամանակ անց, վերականգնվել է: Հասկանալի է, որ ցանկացած հուշարձան կարող է գոյատևել հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ, եթե Բանակի ձևով ամեն վնասվելուց հետո վերականգնվի ու գործի (էջմիածինը մեզ օրինակ):

Զվարթնոցատիպ տաճարներից Գագկաշենը կատարյալ կանգուն վիճակում գոյատևել է 10-13 տարի, վնասված վիճակում՝ մինչև ավերակի վերածվելը, համաձայն Թորամանյանի, գործելիս է եղել իբրև սրբավայր մինչև XI դարի երկրորդ կեսը:

Լեկիթի կանգուն գոյության ժամանակամիջոցը հայտնի չէ, մեր օրերում պահպանվել են արտաքին քարակերտ պատերից որոշ հատվածներ, ներսի աղյուսաշեն սյուները՝ 1-1,5 մետր բարձրությամբ: Իշխանից կանգուն է եղել արևելյան մի մեծ հատված, հետո վերականգնվել, երեսպատվել է 1036 թ.: Վերջնականապես պարզված չէ, թե իրո՞ք Իշխանը եղել է զվարթնոցատիպ. այդ կապարզեն հետագա պեղումները:

Նման պայմաններում կարելի՞ է, արդյոք, այս բոլոր տաճարների մասին մի ընդհանուր եզրակացություն բանաձևել,- ոչ մի դեպքում: Դրանց կործանման պատճառները բացարձակապես տարբեր են: Ինչ վերաբերում է, թե պատճառները թաքնված են տիպին յուրահատուկ սխեմայում, անհիմն է: Զվարթնոցը, տիպի ամենադասական օրինակը, որ կանգուն գոյատևել է երեք դար, ամենահամոզիչ փաստն է այդ տեսակետի անճշտության: Զվարթնոցի կառուցելակերպը եղել է կատարյալ, մեծ հմտության, մեծ վարպետության արգասիք: Եթե արաբական տիրապետության ողջ ընթացքում կոթողը չմնար անխնամ, անպաշտպան, զերծ լիներ թշնամական գործողություններից, գուցե թե մինչև օրս կանգուն լիներ, թեպետ երեք դարն էլ կարճ կյանք չէ: Տա Աստված, որ այսօրվա երկաթբետոնե շինություններն այդքան ապրեն:

Որքան բարձրակարգ են մեր հնագույն հուշարձաններից շատերը, նույնքան էլ ցածր մասնագիտական մակարդակով են կատարված նրանց հետազոտությունները: Եվ եթե նախատինքի առիթներ կան, ապա այդպիսիք պետք է ուղղել մերօրյա հետազոտողների և ոչ թե հուշարձանները կերտողների, անցյալ ժամանակների մեծ արվեստագետների հասցեին:



© National Library of Armenia